# *ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

## *ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՀՏԴ 327.56:39

**Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Քննարկվում են էթնիկ հակամարտության էությունը, արդի ժամանակներում նրա աճող ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա: Արցախյան կոնֆլիկտի օրինակով անդրադարձ է կատարվում ազգամիջյան կոնֆլիկտներին, խոսվում է դրանց առաջացման պատճառների մասին:

***Առանցքային բառեր.*** կոնֆլիկտաբանություն, ազգային կոնֆլիկտ, սեպարատիստական միտումներ, ազգային հարաբերություններ, քաղաքական կոնֆլիկտ, էթնիկ կոնֆլիկտներ, միջազգային կառույցներ, ազգային ինքնություն:

**Ներածություն:** Կոնֆլիկտաբանությունը բավականին երիտասարդ գիտակարգ է, որը ձևավորվել է 20-րդ դարի կեսերին քաղաքագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության և հասարակական այլ գիտությունների հատման տիր-ույթում: Զարգացմանը զուգընթաց կոնֆլիկտների ուսումնասիրությունն աստիճանաբար դարձել է առանձին գիտակրթական ուղղություն և ստացել կոնֆլիկտաբանություն անունը:

Հարկ է փաստել, որ կոնֆլիկտներն անխուսափելի են, իսկ մեր օրերում դրանք ավելի հաճախակի, բազմաբնույթ ու բազմատեսակ են՝ կապված ինֆորմացիոն հեղեղի հետ:

Կոնֆլիկտները կարող են առաջանալ ամենուր և բոլորի միջև, քանզի հնարավոր չէ ստեղծել այնպիսի համակարգ, միջավայր, պայմաններ, որոնք կկարողանան բավարարել բոլորի պահանջները: Մեր խնդիրը ազգամիջյան կոնֆլիկտների էության ուսումնասիրումն է:

**Ազգային գործոնը և կոնֆլիկտները:** Այսօր ազգային գործոնի ազդեցությունը միջազգային քաղաքականության վրա բավականին աճել է և շարունակում է աճել: Ազգերի անջատողական /սեպարատիստական/ միտումները չեն շրջանցել ոչ Ամերիկան, ոչ Ասիան և ոչ էլ Աֆրիկան: Էթնիկ հակամարտությունը մարդկությանն ուղեկցում է նրա պատմական զարգացման երկարատև ժամանակաշրջանում, ինչը հանգեցնում է ավերածությունների, պատերազմների ու աղետների: Ազգամիջյան հակամարտությունը սովորաբար տեղի է ունենում մոտ գտնվող էթնիկ համայնքների ներկայացուցիչների միջև: Հարկ է նշել, որ

կոլֆլիկտային իրավիճակներում շատ հաճախ բացահայտվում են հակասությունները, որոնք առկա են համայնքների միջև: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ էթնիկ հակասությունը դինամիկ փոփոխվող սոցիալ-քաղաքական իրավիճակ է, որն առաջանում է մեկ կամ մի քանի էթնիկ խմբերի ներկայացուցիչների կողմից նախկինում հաստատված ստատուս քվոյի մերժմամբ: Ազգամիջյան հարաբերությունները մաքուր ձևով հանդես չեն գալիս, դրանք սերտորեն փոխկապակցված են տարածքային, սոցիալական, կրոնական, էկոլոգիական հարաբերություններով, այդ պատճառով էլ շատ հաճախ դրանց միջից ազգային գործոնը հստակ տարանջատելը դժվար է: Հարկ է նշել, որ վերջին տարիների իրադարձությունները ցույց են տալիս, որ այլևս հնարավոր չէ պետությունների միջև հակասությունները դիտարկել այնպիսի գործընթաց, երբ նրանցից յուրաքանչյուրը կկարողանա ինքնուրույն լուծել իր խնդիրը, քանզի գլոբալացումը պահանջում է սոցիալական աշխարհն ընկալել որպես համընդհանուր հասարակություն, որում կարող են խաչվել տարաբնույթ ու տարատեսակ շահեր: Մեր խնդիրն է բացահայտել միջէթնիկական հակասությունների էությունը, բնույթը և լուծման ճանապարհները, քանզի յուրաքանչյուր ազգ զգայուն է իր էթնիկ պատմության նկատմամբ: Էթնիկ ազգային ինքնությունը ներառում է սեփական անցյալը, և պատմական չափումը մեծ ազդեցություն է թողնում էթնիկ քաղաքական շատ կոնֆլիկտների ընթացքի վրա:

Աշխարհում գոյություն ունեցող մոտավորապես հինգ հազար էթնոսներից 270-ն ունեն մեկ միլիոնից ավելի բնակչություն, և նրանց 90%-ը այս կամ այն բազմազգ պետության մաս է կազմում: ՌԴ-ում ապրում են 1000-ից ավելի էթնոսներ և ազգեր, և, բնականաբար, նրանք չեն կարող գոհ լինել իրենց կենցաղից, ապրելակերպից, հատկապես, եթե հաշվի առնենք ՌԴ-ում վարվող ազգային քաղաքականությունը, ժողովրդավարական ինստիտուտների ձևական բնույթը, անթաքույց իրականացվող ուծացման քաղաքականությունը: Եվ բնական է նրանց ձգտումը դեպի ազատությունը, ինքնահաստատումն ու պահանջմունքների բավարարումը, որը ծնում է հակամարտություն:

Ազգամիջյան հարաբերություններն ըստ էության սուբյեկտների միջև հարաբերություններ են, և անդրադարձ կատարելով էթնիկ կոնֆլիկտներին՝ կարող ենք ասել, որ դրանք, ընդհանուր առմամբ, դիտարկվում են որպես երկկողմանի հարաբերություններ: Հարկ է նշել, որ նման մոտեցումը պատնեշում է՝ գտնելու արդյունավետ լուծումներ, քանզի այլևս հնարավոր չէ պետությունների միջև կոնֆլիկտները դիտարկել որպես նրանց յուրաքանչյուրի գործը: Իրենք իրենցով ազգամիջյան հակասությունները չի կարելի համարել կոնֆլիկտ, սակայն նրանք պարունակում են կոնֆլիկտի մեծ վտանգ և հարմար իրավիճակում կարող են

վերաճել կոնֆլիկտի: Գլոբալացման դարաշրջանում նման խնդիրների լուծմանը միջազգային հանրությունը ակտիվ մասնակցություն ունի: Հարկ է նշել, որ գլոբալացումն էլ ավելի է գլոբալացրել էթնիկ հակամարությունները, և արդի ժամանակաշրջանում ցանկացած տեղային հակամարտություն մեծ ռիսկ է ներկայացնում համաշխարհային կառուցակարգի համար: Նման իրավիճակներում անընդհատ հանդես են գալիս նոր դերակատարներ, որոնցից յուրաքանչյուրն ակտիվորեն սպասարկում է իր շահերը: Պետք է փաստել, որ ադիականությունը, անհատապաշտության, անհատի ինքնավարության հետ մեկտեղ, էլ ավելի ուժգին դարձրեց էթնիկ խմբերի ինքնորոշման ձգտումը: Բնական է, որ ինքնիշխանություն հաստատելու համար էթնիկ խմբերին, ազգերին անհրաժեշտ է ճանաչում, իսկ դա ինքնին նշանակում է համաշխարհային գերտերությունների ուղղակի միջամտություն, այսինքն՝ հակամարտության գլոբալացում, ինչը երբեմն կարող է հանգեցնել շահերի բախման: Նման իրավիճակներում կարող է առաջանալ քաոս ու անկայունություն, որոնք առաջացնում են մշտական ռիսկեր:

Ուսումնասիրելով էթնոքաղաքական կոնֆլիկտների դետերմինացիան՝ կարելի է մատնանշել դրանց առաջացման մի քանի հիմնախնդիրներ.

1. Բազմազգ պետության ծայրամասային էթնիկ խմբերը ոչ հավասարաչափ մոդեռնացման /նորացման/ պարագայում սկսում են իրենց դժգոհությունը՝ այդ գործընթացների անհամաչափությունից ելնելով:

2. Տվյալ էթնիկ խմբի անդամները գիտակցում են իրենց մեկուսացվածությունը ընդհանուր գործընթացներից և կենտրոնական իշխանությունից:

3. Էթնիկ խմբում ձևավորվում է էթնոազգայնականություն՝ ի պատասխան ճնշող ազգի գործողությունների:

Բնական է, որ սոցիալական կապերի քայքայման պայմաններում ուժեղանում է ազգի՝ որպես սոցիալական նույնականացման ավանդական միջոցի դերը: Որպես էթնոքաղաքական կոնֆլիկտի պատճառ կարող ենք վստահորեն համարել նաև «էթնիկական համերաշխության քաղաքականացումը»:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ էթնոքաղաքական կոնֆլիկտները կարող են առաջանալ նաև իրավիճակային պատճառներով.

1. Էթնիկ խմբերի շրջանակներում ներքին պայքարի առաջնորդության համար.

2. Տնտեսական իրավիճակով պայմանավորված.

3. Միջէթնիկական հարաբերություններում պատմական ժառանգորդի խնդրից ելնելով.

4. Ձսպող գործոնների հանկարծակի անհետացման հետևանքով՝ պայմանավորված կենտրոնական իշխանության թուլացմամբ:

Ուծացման ռազմավարության միջոցով էթնիկ համասեռության հասնելու քաղաքականությանը էթնիկ փոքրամասնությունները գրեթե միշտ պատասխանում են ընդվզումներով, իսկ դրանց ուժգին դրսևորման դեպքում կարող է ի հայտ գալ էթնիկ քաղաքական կոնֆլիկտ: Գրեթե բոլոր էթնիկ խմբերը, որոնք ապրում են բազմազգ հասարակություններում, ճնշվում են իշխող էթնիկ խմբի կողմից, ունեն որոշակի ձգտում առ ինքնավարություն և անկախություն, որը իշխողների կողմից պատժվում է: Դրա վառ դրսևորումներից են Նախիջևանը, Արցախը, որոնք սկուտեղի վրա ռուսական չինովնիկները կարճատես քաղաքականության հետևանքով պարզապես նվիրաբերեցին Ադրբեջանին: Նախիջևանը ամբողջովին հայաթափվեց «ժողովուրդների բարեկամության» կարգախոսի ներքո, իսկ Արցախյան կոնֆլիկտն ունի հետևյալ նախապատմությունը. հիմնախնդրի սկիզբը համարվում է 1921թ, երբ Ստալինի անմիջական ցուցումով ՌԿ/բ/Կ Կովկասյան բյուրոն որոշեց Արցախը հանձնել Ադրբեջանին՝ թուրքերին հաճոյանալու համար: Նման կամայականությունը հետագա տարիներին հակասությունների, ընդվզումների պատճառ է դարձել, որոնք ճնշվել են բիրտ ուժի միջոցով: Հետագայում ադրբեջանցիները համառորեն հրաժարվել են ճանաչել արցախահայության ինքնությունը, որի պատճառը, հավանաբար, պետք է փնտրել ադրբեջանական ինքնության կայացման գործընթացում: Ինչպես նշում է Բեռլինի Հումբոլտի համալսարանի Ադրբեջանի պատմության ամբիոնի վարիչ Աուխը, միայն 19րդ դարի վերջում են սկսում «կովկասյան մուսուլմանների» փոխարեն կիրառել «կովկասյան թաթարներ», այնուհետև «ադրբեջանական թուրքեր» անվանումները: Խորհրդային Միության ժամանակ ադրբեջանական ինքնության ձևավորման գործընթացը շարունակվեց: Ադրբեջանական թուրքերը դարձան թրքախոս ադրբեջանցիներ, և այդ գործընթացը դեռևս չի ավարտվել [1]: Հարկ է փաստել, որ շատ հաճախ այն ուղեկցվում է վտանգավոր զավեշտով, ըստ որի ոչ միայն Արցախը, այլ նաև ՀՀ-ի տարածքի մեծ մասը ադրբեջանական են: Բնականաբար, նմանատիպ անհեթեթությունները ենթարկվում են քննադատության: Կարելի է ասել, որ հիմնականում դրանց նպատակը ազգին համախմբելն ու սեփական իշխանությունը երկարաձգելն է, որի համար անհրաժեշտ է ի ցույց դնել արտաքին թշնամու կերպար:

Բնական է, որ նման իրավիճակներում էթնիկ քաղաքական կոնֆլիկտերը միշտ էլ սպասելի են, և համաշխարհային հասարակությունը, ըստ էության, դառնում է **ռիսկի հասարակություն**, քանզի անկայունությունը կարող է առաջացնել նոր ռիսկեր, և այդ շրջանակից դուրս գալու ճանապարհը սեփական ինքնիշխան պետության ստեղծումն է որոշակի տարածքում: Հարկ է նշել որ խնդիրը հաճախ կարող է ոչ թե լուծում ստանալ, այլ հանգեցնել անջատողականության ակտի-

վացման: Հակամարտության և իշխանության համար, որոնք տեղի են ունենում որոշակի բաժանարար գծերի երկայնքով, միշտ էլ կա շարժառիթ [2]: Միջազգային կառույցները մեծ անելիք ունեն, նրանց առաջնահերթ խնդիրն է ստեղծել բոլորի կողմից ընդունելի մակրոհամակարգ, ինչը հնարավորություն կստեղծի նման կոնֆլիկտներից խուսափելու համար: Այս առիթով Ա. Կրայկեմերը նշել է՝ ԵԱՀԿ/ԵԱՀԽ սկզբունքների բարեփոխման պահանջը դառնում է հստակ: Հելսինկյան Հռչակագիրը վերամշակելու հայեցակարգային աշխատանքի անհրաժեշտություն է առաջանում Եվրոպայում և Ասիայում ապակենտրոնացման և ռեգիոնալացման միտումներին վերաբերող ԵԱՀԿ սկզբունքների և կառույցների լրամշակման ուղղությամբ [3]:

**Եզրակացություն:** Ամփոփելով կարող ենք ասել, որ կոնֆլիկտները, ընդհանրապես, իսկ էթնիկ կոնֆլիկտները, մասնավորապես, մարդկության զարգացման մշտական ուղեկիցն են: Մարդը միշտ էլ հակադրվելու պատճառ կունենա, քանզի դա թեթևացնում է իր մեղքը՝ կատարած սխալները ուրիշի վրա բարդելու առումով: Հարկ է փաստել, որ շատ հաճախ հակամարտության պատճառը տարածքային, տնտեսական կայունության, քաղաքական կարգավիճակի, անկախության պահանջներն են, այլ ոչ «էթնիկական թշնամանքը» որպես այդպիսին: Վերջին հաշվով՝ մենք էթնիկական թշնամանք չենք զգում այն ժողովուրդների հանդեպ, որոնք տարածքային առումով հեռու են մեզանից և վտանգ չեն ներկայացնում: Այստեղ կարծրատիպերի փոփոխության պահանջ կա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Auch E.M.** Aserbaidschanische Identitatssuche und Nationswerdung zum Beginn des 20 / Jahrhunders, Halbach U. Kappeler A. (Hg.), Krisenherd Kakasus. -Baden-Baden, 1995.- 109s.
2. **Esser H.** Die Mobilisierung ethnischer /Konflikte K.J Bade (Hg.).- 1996. -74s.
3. **Kreikemeyer A.** Ruslands Sicherheitspolitik in bewaffneten Konflikten in der GUS-sechs fallstdien.- 1997, - 231s.



**Н.К. БАГДАСАРЯН**


## СУЩНОСТЬ, ХАРАКТЕР ЭТНОПОЛИТИЧЕСКОГО КОНФЛИКТА


Обсуждается сущность этнического конфликта, его растущее влияние на мировую политику в новейшее время. На примере арцахского конфликта затрагиваются межнациональные конфликты, говорится о причинах их возникновения.



***Ключевые слова:*** конфликтология, национальный конфликт, сепаратистские тенденции, национальные отношения, политический конфликт, этнические конфликты, международные структуры, национальная идентичность.

**N.K. BAGHDASARYAN**

## THE ESSENCE AND NATURE OF THE ETHNO-POLITICAL CONFLICT

The essence of the ethnic conflict, its growing influence on the world politics in modern times are discussed. Using the example of the Artsakh conflict, interethnic conflicts are touched upon, the reasons for their occurrence are discussed.

***Keywords:*** conflictology, national conflict, separatist tendencies, national relations, political conflict, ethnic conflicts, international structures, national identity.

ՀՏԴ 329(479.25)

**Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

## ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ /1908-1914թթ./

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցություններից Հնչակյան կուսակցության կազմակերպական կառույցները Կիլիկիայում Եղեռնի նախօրեին /1908-1914թթ./, ինչի հիմքով հնարավոր է վերլուծել արևմտահայության շրջանում նրանց ներկայացվածությունն ու գործունեության արդյունավետությունը:

***Առանցքային բառեր***. կոմիտե, մասնաճյուղ, վարիչ մարմին, կուսակցության անդամ, համագործակցություն, կազմակերպական մարմիններ:

Հնչակյան կուսակցության Կիլիկյան կազմակերպական կառույցների /1908-1914 թթ./ ուսումնասիրության նպատակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության մեզ այդ կուսակցության ներկայացվածության իրական պատկերի և հայերի ինքնապաշտպանության ուղղությամբ ընդունված որոշումների կատարման ընթացքի հետազոտությունն ու ներկայացումն է:

Հիշյալ ժամանակաշրջանում Կիլիկիայում գործում էին երեք կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Սահմանադիր ռամկավար կուսակցությունը (1908 թ. Ալեքսանդրիայում վերակազմյալ հնչակյանների և արմենական կուսակցության միավորմամբ ձևավորված):

Փորձ է արվում ցույց տալ տարբեր շրջաններում կուսակցության ներկայացվածության աստիճանը՝ կուսակցության կառույցների պատկերը Կիլիկիայում, մասնավորապես Հաճնում:

Սահմանադրական շրջանում Հաճնում էին գտնվում հնչակյան տեղի մասնաճյուղի անդամները, որոնք նախատեսում էին դիմադրական ներքին աշխատանքներ: 1915 թ. ջարդերի նախօրեին տեղում կազմակերպվեց դիմադրություն՝